նան փախստական։ Երբ փաշային Պոլսէն պաշտօնանկ կ'ընեն, նա կը միանայ Հիւսէյն աղային, որով անմիջապէս նորեկ ուղարկուած փաշան (կառավարիչը) նորէն ետ կ. Պոլիս կը վերադարձնեն։

Սինան անուն Ենկիչար աղասին Վան գալով կը տիրապետէ բերդի վերի մասին, Հիւսէյն աղան կ'իշխէ ներքին մասին։ Ենկիչար աղասին թնդանօթներով կը ամրակոծէ Հիւսէյն աղան և չի յաջողիր անոր յաղթել։ Նախկին պաշտօնանկ փաշա մը,— ապատակ Զօմարը, կը դաշնակցի Խոշապի բերդի տէր Սիւլէյման բէգի հետ, և իր իշխանութիւնը հաստատելով, օգնութիւն ցոյց կու տայ Ենկիչար աղասուն։ Զօմար և Սիւլէյման բէգ կը հանին մինչ Վարագ, ու միաբանները չարչարելով, կը կողոպտեն, կը խլեն եկեղեցական շատ ոսկեղէն ու արծաթեղէն անօթներ, որոնց հետ և Ս. Նշանը, ու կը տանին Խոշապայ բերդը։ Հիւսէյն աղան — Վանի իշխողը, կը գիմէ իր դաշնակից Եզդին-Շէրին ու կ'ըսէ. Վանի իշխաններն (*) ու Սիւլէյման բէգ իմ թշնամիներն են. ես քո օգնութեան պէտք ունիմ։ Ինչպէս կ'երևի, Վանի իշխանները մաս ունեցեր են այս կռիւների մէջ՝ Հիւսէյնին տապալելու համար. ու երբ միացեր են Սիւլէյման բէգին, Վարագայ եկեղեցական հարստութիւնները չեն կամեցեր թողուլ Հիւսէյնի իշխանութեան տակ, ու Խոշապ են տարեր։ Այդ կը հաստատուի այն առաջարկէն, որ Սիւլէյման բէգ, կը թելադրէ իր շրջանի մէջ եղած Հոգւոց —Վանուց Պետրոս վարդապետին, որ Ս. Նշանը Վարագ մնալու փոխանակ՝ Հոգւոց—Վանքը մնայ. բայց Պետրոս վարդապետը նախ կը տարակուսի, և ապա յանձն չառներ, առարկելով թէ անոնց ստացուածքը անոնց կը պատկանի և մերը մեզ։ Հայերը այսպէս՝ Քիւրդ Տէրէպէյլիների հետ լինելով բաժան բաժան, եղած են շրջան շրջան, և մինչև անգամ եկեղեցիներ ու կրօնական անօթները կամեցեր են ունենալ իրենց շրջանի մէջ իրրև իրենց իշխանութեան պատկանելի։

(*) Կ'ակնարկէ Հայերու.